

Պատմական ակնարկ

1920 թվականին ՀՍՍՀ Հեղկոմի կողմից կազմակերպվում է Արդարադատության ժողովրդական կոմիսարիատը: Գործել է 1923 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՍՍՀ ԿԳԿ նախագահության կողմից ընդունվում է գործունեության կանոնադրությունը: Կից գործել է դատախազությունը, և արդարադատության ժողկոմը միաժամանակ հանրապետության դատախազն էր: 1930 թվականի հունվարի 31-ին ժողկոմատը վերացվում է և վերստին ստեղծվում 1933 թվականի հունվարի 5-ին: Այդ ժամանակամիջոցում արդարադատության ժողկոմատի խնդիրները կատարել են ՀՍՍՀ դատախազությունը և Գերագույն դատարանը: 1936 թվականին արդարադատության ժողկոմատից անջատվում են դատախազական և քննչական մարմինները, և ժողկոմատը վերակազմվում է որպես Արդարադատության մինիստրություն: Գործում մինչև 1959 թվականը: Մինչև 1970 թվականը նրա գործառույթներն իրականացնում են ՀՍՍՀ գերագույն դատարանը և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր իրավաբանական հանձնաժողովը:

ՀՍՍՀ Գերագույն սովետի Նախագահության 1970 թվականի նոյեմբերի 2-ի հրամանագրով ՀՍՍՀ արդարադատության մինիստրությունը, որի խնդիրներն էին՝ դատական, նոտարական, զագսի մարմինների, փաստաբանների կոլեգիայի, իրավախորհրդատուների, գործունեության ղեկավարումը, իրավունքի պրոպագանդան և քաղաքացիների իրավական դաստիարակության գործի մեթոդական ղեկավարությունը, դատական մարմինների գործունեության ընդհանրացումը, մասնակցություն գործող օրենսդրության համակարգմանը:

1920-30թթ. Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության արդարադատության ժողկոմերը (ժողովրդական կոմիսարներ) են եղել՝

- Ա. Բաղդասարյանը 1920-1921 թթ.,
- Ա. Կարինյանը 1921թ.,
- Ա. Շահվերդյանը 1921թթ.,
- Դ. Շահվերդյանը 1922-1923թթ.,
- Լ. Վարդանյանը 1924-1927թթ.,
- Զ. Աշրաֆյանը 1927-1929թթ.,
- Ա. Հովսեփյանը 1929, 1934-1937թթ.,
- Ս. Խանոյանը 1929-1930թթ.,

1930թ. Հանրապետության արդարադատության ժողկոմատը վերացվում է, այն վերականգնվում է 3 տարի անց՝ 1933թ.: Այս տարիների Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ժողկոմերն են եղել՝

- Պ. Թորոսյանը 1933-1936թթ.,
- Ա. Հովսեփյանը 1936-1938թթ.,
- Ա. Հուսեփնզադե Ալի Մամեդովը 1938-1941թթ. (ազգությամբ ադրբեջանցի)

Հայաստանի Հանրապետության արդարադատության ժողովրդական կոմիսարիատը 1941թ. Վերանվանվել է Հայկական ԽՍՀ արդարադատության մինիստրություն:

Մինիստրներ են եղել՝

- Գ. Նազարյանը 1941-1948 թթ.
- Ա. Կարապետյանը 1951-1951 թթ.
- Հ. Մեղավորյանը 1951-1959 թթ.